ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<17>> հունիս 2014 թվականի N: 27 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 230 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի գործունեության կարգի>> 2-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2014 թվականի հունիսի 16-ի թիվ 1/23.8.06/11249-14 գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի կազմում Գնել Հայրապետյանի փոխարեն ընդգրկել Լևոն Գասպարյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 230 կարգադրության մեջ <<Գ. Հայրապետյան, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետի տեղակալ>> բառերը փոխարինել <<Լ.Գասպարյան, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Շիրակի մարզի տարածքային բաժնի պետ>> բառերով:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է